ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«28» «հոկտեմբեր» 2024 թ. № 249-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 107-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մարտի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» N 107-Լ հրամանի հավելված N 10-ի՝ հողերի և ընդերքի քաղաքականության վարչության կանոնադրության՝

1) 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ»,

2) 5-րդ կետում՝

ա. 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) սեյսմիկ և արտածին երկրաբանական երևույթների ռիսկի գնահատման համար օգտագործվող տվյալների բազայի ստեղծման և ընդլայնման, երկրորդային սեյսմիկ վտանգի գնահատման ընթացքում օգտագործվող տվյալների բազայի ընդլայնման ապահովմանը մասնակցություն.»,

բ. 18-րդ ենթակետում «բանկի» բառը փոխարինել «բազայի» բառով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 33.1-ին ենթակետով՝

«33.1) Նախարարությանը վերապահված՝ ոլորտային կադաստրների վարման լիազորությունների շրջանակում, պատասխանատու ստորաբաժանումների կողմից

տարածական տվյալների ֆոնդի ստեղծման, վարման, թարմացման, պահպանման և տեղեկատվության տրամադրման հետ կապված աշխատանքների համակարգումը.»:

6/28/2024

X

ՏԻԳՐԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Signed by: GABRIELYAN TIGRAN 2211780245

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Տ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

«28» հունիսի 2024թ.

ք. Երևան